ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից հասարակական խորհրդի նիստի

2017թ. դեկտեմբերի 8

Նախագահում էր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար (այսուհետ՝ Նախարար), խորհրդի նախագահ Ա.Ասատրյանը (այսուհետ՝ Նախագահ)

Մասնակցում էին՝
Խորհրդի անդամներ

Թամարա Աբրահամյան	«Արազա» ԲՀԿ
Մարիետա Թեմուրյան	«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի» Վանաձորի Գրասենյակ ՀԿ
Էդուարդ Կիրակոսյան	«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» ՀԿ
Միրա Անտոնյան	«Երեխաների պաշտպանության ցանց ոչ առևտրային» ԻԱՄ
Արթուր Սարգսյան	«Աշխատանքի իրավունքի պաշտպանի գրասենյակ» ՀԿ
Մարինե Համբարձումյան	«Հայ օգնության միություն» ԲՀԿ
Շողինե Սողոմոնյան	«Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ
Նաիրա Առաքելյան	«Արմավիրի զարգացման կենտրոն» ԲՀԿ
Տիգրան Պետրոսյան	«Հայկական Կարիտաս» ԲՀԿ
Աշոտ Քոչարյան	«Սօս մանկական գյուղեր» ԲՀԿ
Աիդա Մուրադյան	«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» ԲԿ
Աննա Եղիազարյան	«Հայկական կարմիր խաչ ընկերություն» ՀԿ
Գրիգորի Գրիգորյանց	«Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ» Հայաստանյան ներկայացուցչություն
Արայիկ Հայրապետյան	Ֆիզիկական անձ
Աննա Մնացականյան	Ֆիզիկական անձ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից (այսուհետ՝ Նախարարություն)

Հրավիրված էին և մասնակցում էին՝

Սոնա Հարությունյան	Նախարարի տեղակալ

Ելք. / 53807-17
20 12 17

Դավիթ Հակոբյան	Նախարարի խորհրդական
Աստղիկ Մինասյան	Նախարարության աշխատակազմի սոցիալական աջակցության վարչություն
Լենա Հայրապետյան	Նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչություն
Արամ Պետրոսյան Ռուզաննա Աբրահամյան	Նախարարության աշխատակազմի իրավական ապահովման բաժին
Աննա Հակոբյան	Հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչություն
Սիրանուշ Զաքարյան	Նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժին
Արփինե Հակոբյան	«ՀԿ կենտրոն» ՀԿ
Մարիամ Անտոնյան	«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի» Վանաձորի Գրասենյակ ՀԿ
Գայանե Մարտիրոսյան	«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» ԲԿ
Բացակայում էին՝ Խորհրդի անդամներ	
Սուսաննա Թադևոսյան	«Հույսի կամուրջ» ՀԿ
Լալա Տեր-Ղազարյան	«Պանորամա Էյեմ» ՍՊԸ
Գոռ Աբրահամյան	«Հայաստանի համայնքների միություն» ԻԱՄ
Սյուզաննա Բաղոյան	ֆիզիկական անձ

Օրակարգի նախագծում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում և քննարկում

   (ՀՀ ԱՍՀ նախարարի տեղակալ Ս.Հարությունյան)

2. Սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպություններ այցելելու, նկարահանելու, հարցազրույցներ վարելու և առանձնահատուկ դեպքերի հրապարակայնության վերաբերյալ կանոնակարգի նախագծի ներկայացում և քննարկում

   (Իրավական ապահովման բաժնի փորձագետ Ռուզաննա Աբրահամյան)

3. Մանկատան շրջանավարտներին բնակարանների տրամադրման վերաբերյալ ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագծի ներկայացում և քննարկում

   (Սոցիալական աջակցության վարչության պետ Ա.Մինասյան)

4. Խորհրդի անդամների կողմից տեղեկատվության ներկայացում իրականացված ծրագրերի և հետազոտությունների վերաբերյալ

4.1.«Պետական աջակցություն մանկատան շրջանավարտներին» ծրագրի արդյունքների ամփոփ տվյալների ներկայացում

(Աննա Մնացականյան)

4.2. «Սոցիալական աշխատանքի պրակտիկայի զարգացում Արմավիրում և Արարատում» ծրագրի ներկայացում

(«Արմավիրի զարգացման կենտրոն» ԲՀԿ-ի տնօրեն Նաիրա Առաքելյան)

Մինչ օրակարգին անդրադառնալը՝ Նախագահը ողջունեց հասարակական խորհրդի անդամներին և անդրադարձավ նիստի օրակարգին:

Նիստի օրակարգի վերաբերյալ առաջարկություններ ու դիտողություններ չներկայացվեցին:Նիստի օրակարգը հաստատվեց միաձայն:

1. **Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում և քննարկում**

Անցնելով օրակարգի առաջին հարցին՝ նախարարի տեղակալ Ս.Հարությունյանը ներկայացրեց համառոտ տեղեկատվություն մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ:

Նախարարի տեղակալը նշեց, որ նոր գործողությունների ծրագրով նախատեսվում է 96 միջոցառում, որի 25 տոկոսն իրականացվելու է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջոցով և որոնց իրականացման մասով նախարարությունը համարվում է համակատարող: Քանի որ Նախարարությունը չափազանց կարևորում է միջոցառումների իրականացման գործընթացը, այդ իսկ պատճառով ս/թ. դեկտեմբերի 19-ին բոլոր շահագրգիռ ՀԿ-ների մասնակցությամբ վերոնշյալ ծրագրով նախատեսված միջոցառումների վերաբերյալ նախատեսվում է անցկացնել ընդլայնված քննարկում: Միաժամանակ նշեց, որ երրորդ և չորրորդ եռամսյակների համար նախատեսվել էր իրականացնել չորսական միջոցառում, որոնց ուղղությամբ կատարվել են համապատասխան աշխատանքներ և դրանց վերաբերյալ ամփոփ տեեկատվությունը նախարարի խորհրդական Դ.Հակոբյանի կողմից տրամադրվել է Խորհրդի մասնակիցներին:

Այնուհետև Ս.Հարությունյանն անդրադարձավ 36-րդ՝ «Ներդնել սոցիալական պաշտպանության ոլորտում մատուցվող ծառայությունների և ծրագրերի մշտադիտարկման և արդյունավետության գնահատման արդյունավետ համակարգ» միջոցառմանը, և նշեց , որ այդ ուղղությամբ արձանագրվել է լուրջ առաջընթաց:

Նշեց, որ Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի մշտադիտարկման և գնահատման միասնական համակարգի ներդրման գործընթացի ապահովման նպատակով ընթացքի մեջ են տեղեկատվության հավաքագրման, քանակական ցուցանիշների վերաբերյալ տվյալների ստացման և գնահատման աշխատանքները:

Ներկայացրեց, որ ավարտվել են սոցիալական պաշտպանության ոլորտի թվով 14 ծրագրերի՝ (երեխաների հիմնահարցերի ոլորտ՝ 6, սոցիալական աջակցության ոլորտ՝ 5,

հաշմանդամների հիմնահարցերի ոլորտ՝ 3) տվյալների հավաքագրման դաշտային աշխատանքները. կազմվել է ամփոփ հաշվետվություն և ներկայացվել աշխատանքային խմբին: Արդյունքների վերաբերյալ կազմակերպվել է քննարկում բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ, միաժամանակ լրամշակված հաշվետվությունն ընդունվել է Նախարարի կողմից:

58-րդ՝ **«Գործատուին տրամադրել պետական աջակցություն զբաղվածության կարգավորման պետական ծրագրերով աշխատաշուկայում անմրցունակ և հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորման դեպքում» միջոցառմանն անդրադառնալով՝ նշեց, որ** կայուն զբաղվածություն ապահովող պետական ծրագրերին գործատուների շահագրգիռ ներգրավվածությունը խթանելու և գործատուների մասնակցության շրջանակը մեծացնելու նպատակով, ՀՀ կառավարության 2017թ. մարտի 30-ի N339-Ն որոշման 6-րդ կետով փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման 8-րդ հավելվածով հաստատված «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրման կարգում» ըստ որի՝ սահմանվել և գործարկվել են գործատուներին միանվագ փոխհատուցման (պետական սուբսիդիայի) տրամադրման նոր ընթացակարգ, մասնավորապես՝

1. գործատուներին միանվագ փոխհատուցման չափերը սահմանվել են ըստ աշխատաշուկայում անմրցունակ անձանց կատեգորիաների,
2. հստակեցվել են պետություն-գործատու-անմրցունակ անձ եռակողմ պայմանագրերը և դրանց ժամկետները,
3. սահմանվել են միանվագ փոխհատուցման տրամադրման համար առաջնահերթություններն՝ ըստ շահառուների կատեգորիաների:

Միաժամանակ նշեց, որ 2018թ.-ին նախատեսված ամենամյա ծրագրերն էականորեն տարբերվելու են 2017թ.-ից և գրեթե ամբողջությամբ իրականացնելու են 2016թ. նախատեսված ծրագրերը, որոնց միջոցով աջակցություն են ցուցաբերելու գործազուրկի կարգավիճակ ունեցող և աշխատաշուկայում անմրցունակ անձանց, ինչպես նաև ընտանեկան նպաստ համակարգից դուրս մնացած ընտանիքներին:

86-րդ՝ **«Դասակարգել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում մատուցվող (մասնագիտացված մանկատներ) ծառայությունները» միջոցառմանն անդրադառնալով՝ նշեց,** որ մշակվել և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի կողմից 2107թ. հուլիսի 7-ին հաստատվել է «Ըստ ֆունկցիոնալ անկախության, մասնագիտացված մանկատներում խնամվող երեխաների կարիքների դասակարգման մեթոդաբանությունը հաստատելու մասին» N 92-Ա/1 հրամանը, որով սահմանվել են խնամքի տարանջատման չափորոշիչները:

Վերոնշյալ հրամանով ստեղծված աշխատանքային խմբի կողմից ուսումնասիրություններ է կատարվել հաստատություններում, որի հիման վրա խնամքի տարանջատման չափորոշիչներին համապատասխան ներկայացրել են առաջարկություններ: Առաջարկություններն իրացնելու նպատակով մշակվում է ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որը սահմանված կարգով ներկայացվելու է ՀՀ կառավարություն:

Չափորոշիչների կիրառման ընթացքում ի հայտ եկած խնդիրներին լուծում տալու նպատակով աշխատանքային խումբը լրամշակելու է նաև «Ըստ ֆունկցիոնալ անկախության մասնագիտացված մանկատներում խնամվող երեխաների կարիքների դասակարգման մեթոդաբանությունը հաստատելու մասին» N 92-Ա/1 հրամանը՝ չափորոշիչների կիրառման արդյունավետությունը բարձրացնելու համար:

39-րդ միջոցառմանն անդրադառնալով՝ Ս.Հարությունյանը նշեց, որ նախատեսվում է «Մշակել բազմազավակ ընտանիքներին տրամադրվող սոցիալական երաշխիքներն ամրագրող հիմնարար իրավական ակտ»:

Հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 83 և 86-րդ հոդվածները, ինչպես նաև ՀՀ կառավարության 2016թ. մարտի 10-ի N 245-Ա որոշման հավելվածի 21-րդ և ՀՀ կառավարության 2017թ. հունվարի 12-ի N 122-Ն որոշման (ՀՀ կառավարության 2017 թվականի գործունեության ծրագրի) N 1 հավելվածի 127-րդ կետերը՝ մշակվել է «Բազմազավակ ընտանիքների մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Ներկայացրեց, որ Նախագծի նպատակն է կարգավորել բազմազավակ ընտանիքների աջակցության տրամադրման հետ կապված հարաբերությունները, սահմանել բազմազավակ ընտանիք հասկացությունը, բավարարել բազմազավակ ընտանիքների հիմնական պահանջմունքները, նպաստել բազմազավակ ընտանիքների ինքնապահովմանն ու ծագած հիմնախնդիրներն ինքնուրույն լուծելու ունակությունների զարգացմանը, կանխարգելել նրանց սոցիալական մեկուսացումը և բարելավել ժողովրդագրական իրավիճակը:

67-րդ՝ «Մշակել ՀՀ-ում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման քաղաքականության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագիր» միջոցառմանն անդրադառնալով՝ նշեց, որ «ՀՀ-ում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման քաղաքականության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի» նախագիծը մշակվել և սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարություն: Միաժամանակ համապատասխան կարծիք ստանալու նպատակով այն ներկայացվել է ՀՀ փաստաբանների պալատ և ՀՀ Նախագահի աշխատակազմ:

Անդրադառնալով 73-րդ միջոցառմանը, նշեց, որ այն նախատեսում է «Հայաստանում պետության կողմից ֆինանսավորվող աջակցության կենտրոնների հիմնում՝ Հայաստանի 3 մարզերում և մայրաքաղաքում ստեղծել պետության կողմից ֆինանսավորվող աջակցության կենտրոններ

Վերոնշյալ կենտրոնները նախատեսվում է ստեղծել երեխաների շուրջօրյա խնամքի հաստատությունների վերակազմավորման արդյունքում: Ներկայացրեց նաև, որ գործընթացն

արդեն սկսվել է և ներկայումս գործում է մեկ աջակցության կենտրոն, որը գտնվում է Նուբարաշենում:

87-րդ միջոցառմանն անդրադառնալով՝ ներկայացրեց, որ նախատեսում է **«Իրականացնել բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում տրամադրվող ծառայությունների համապատասխան աշխատողների վերապատրաստման, վերարակավորման միջոցառումներ»:**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ պարբերաբար իրականացվում են սոցիալական պաշտպանության հաստատությունների համապատասխան աշխատողների վերապատրաստման, ինչպես նաև վերարակավորման միջոցառումներ:

Միաժամանակ հավելեց, որ այդ ուղղությամբ հսկայական աշխատանքներ են կատարվել, չնայած, որ ՀԿ-ների կողմից վերոնշյալ միջոցառման վերաբերյալ լուրջ դիտարկումներ և հետազոտություններ չեն իրականացվել:

Հարցի քննարկումն ավարտելուց հետո Նախագահի առաջարկով Խորհուրդը որոշեց ի գիտություն ընդունել նախարարի տեղակալ Ս.Հարությունյանի կողմից ներկայացված զեկույցը:

Այնուհետև խոսքը փոխանցվեց նախարարության աշխատակազմի իրավական ապահովման բաժնի փորձագետ Ռուզաննա Աբրահամյանին:

2. Սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպություններ այցելելու, նկարահանելու, հարցազրույցներ վարելու և առանձնահատուկ դեպքերի հրապարակայնության վերաբերյալ կանոնակարգի նախագծի ներկայացում և քննարկում

Անցնելով օրակարգի 2-րդ հարցին՝ Ռ.Աբրահամյանը համառոտ ներկայացրեց նախարարության ենթակայությամբ գործող հաստատություններ՝ մանկատներ, գիշերօթիկ խնամքի և սոցիալական հոգածության ցերեկային կենտրոններ այցելելու, նկարահանելու, հարցազրույցներ վարելու և առանձնահատուկ դեպքերի հրապարակայնության վերաբերյալ կանոնակարգի նախագիծը, որի նպատակը շահառուների անձնական տվյալների մշակման վերաբերյալ իրավահարաբերությունների համակարգումն է՝ պայմանավորված շահառուների կարգավիճակի առանձնահատկություններով:

Անդրադառնալով վերոնշյալ կարգի կարևորությանը՝ նշեց, որ անձնական կյանքի վերաբերյալ տեղեկությունների հավաքագրումը և հրապարակումն առավել խիստ հիմքերի վրա է դրված, երբ խոսքը վերաբերում է բնակչության խոցելի խմբերին (երեխաներ, տարեցներ, հաշմանդամություն ունեցող անձինք, որոնց՝ նշված իրավահարաբերություններում պաշտպանության մակարդակը պետք է լինի առավել բարձր՝ պայմանավորված վերջինների կարգավիճակով:

Միաժամանակ հավելեց, որ ընդհանուր առմամբ կարգավորումն ունի երկու ուղղվածություն. առաջինը վերաբերում է այն շահառուներին, ովքեր ինքնուրույն կարող են

իրացնել իրենց անձնական տվյալների պաշտպանությունը, և 2-րդը՝ երբ տվյալ շահառուների անունից որպես օրինական ներկայացուցիչ հանդես է գալիս պետությունը: Դա այն դեպքն է, երբ անձը անգործունակ, սահմանափակ գործունակ է կամ տարիքը չի գերազանցում 16-ը:

Վերոնշյալ կարգը անդրադառնում է նաև անձնական տվյալները մշակելու վերաբերյալ համաձայնություն տալու կարգավորումներին, ինչպես նաև առանձնահատուկ ուղղվածություն է դրսևորվում երեխաների, տարեցների կամ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը: Գաղափարը հետևյալն է՝ ածնական տվյալների մշակումը օրինական է համարվում այն դեպքում, եթե պահպանվել են օրենքի պահանջները և տվյալ սուբյեկտն կամ օրինական ներկայացուցիչը իր անձնական տվյալները մշակելու համար տվել է իր համաձայնությունը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Երկրորդ հարցի վերաբերյալ Խորհրդի անդամների կողմից հնչեցին տարբեր հարցադրումներ, մտահոգություններ և առաջարկություններ:

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» ԲԿ-ի ներկայացուցիչ Ա.Մուրադյանը հարց բարձրացրեց «Անձնական տվյալների մասին» ՀՀ օրենքի առարկա հանդիսացող իրավահարաբերությունների՝ նշված նախագծով կարգավորման և վերոնշյալ կարգավորման նեղ շրջանակի վերաբերյալ:

Ռ. Աբրահամյանը պարզաբանեց, որ խնդիրը չի սահմանափակվում միայն նախարարության ենթակայությամբ գործող հաստատությունների շահառուների պաշտպանությամբ, և նախագծի նեղ կարգավորում ունենալը կայանում է նրանում, որ ՀՀ սահմանադրությամբ և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով նորմատիվ իրավական ակտի ընդունման հնարավորություն նախատեսված չէ, միևնույն ժամանակ նշելով, նախատեսված օրենսդրական փոփոխությունների մասին, որոնք հարցի համալիր կարգավորում են նախատեսում:

Այնուհետև, «Երեխաների պաշտպանության ցանց» ոչ առևտրային ԻԱՄ-ի նախագահ Մ. Անտոնյանը հարց ուղղեց Ռ.Աբրահամյանին, արդյոք վերոնշյալ կարգը հնարավորություն ընձեռնում է երեխաների իրավունքների պաշտպանության տեսանկյունից նրանց շահերը պաշտպանելու համար, օրինակ բերելով այն հանգամանքը, որ «Կիասաբաց լուսամուտներ» հաղորդման ընթացքում երեխաներին ևս ընդգրկում են ընտանիքում (ծնողներ, հարազատներ) ծագած վեճերի մեջ, որն էլ ազդում է երեխայի հոգեբանության վրա:

Ռ.Աբրահամյանը պարզաբանեց, որ վերոնշյալ կարգը չի տալիս այդ հնարավորությունը այն պատճառով, որ իր բնույթով նորմատիվ չէ, և առավելապես կրում է ընթացակարգային բնույթ: Նշված իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ ընտանեկան օրենսգրքի, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի և այլ օրենքների միջոցով: Միաժամանակ նշեց, որ վերոնշյալ օրենքի համաձայն անձնական տվյալների մշակումը հնարավոր է, եթե այն օրինական է: Ընդ որում, հատուկ ուշադրության է արժանի «երեխայի լավագույն շահ» հասկացությունը: Երեխայի լավագույն շահի անտեսման ռիսկի առավել ցայտուն օրինակ է հանդիսանում այն դեպքը, երբ հրապարակվում է երեխայի սոցիալապես անապահով վիճակի կամ ընտանեկան նեղ խնդիրների վերաբերյալ տեղեկատվությունը, եթե

իհարկե դա չի հետապնդում երեխայի շահերի պաշտպանության կամ հանրային շահի նպատակ:

«Հայկական կարմիր խաչ ընկերություն» ՀԿ-ի ներկայացուցիչ Ա. Եղիազարյանը «Կիասաբաց լուսամուտներ» հաղորդման օրինակին անդրադառնալով՝ նշեց , որ ամեն դեպքում պետք է հաշվի առնել, որ «շահ»-ը շահառուին է վերաբերում, այսինքն՝ եթե շահառուի կամքին հակառակ չի իրականանում նման գործընթացները, դա էլ է համարվում շահ և միգուցե իրավասություն չունեն լրիվ սահմանափակելու այդ իրավունքը:

Ռ.Աբրահամյանը բարձրացված հարցի կապակցությամբ պարզաբանեց, որ անձնական տվյալների պաշտպանության համաձայնություն իրավասու է տալ ցանկացած անձ՝ իր մասով, որպիսի պարագայում մշակումը կլինի օրինական: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ ինչպես նշվեց, որոշակի դեպքերում շահառուի իրավունքների պաշտպանությունը դրվում է օրինական ներկայացուցչի վրա, որը տվյալ դեպքում պետք է գործի օրինական, այդ թվում՝ ելնելով շահառուի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նկատառումներից:

Նախարարը կարևորելով նախագծի քննարկումը՝ նշեց, որ խնդիրն ավելի գլոբալ է և այդ ուղղությամբ իրականացվում են լայնածավալ աշխատանքներ և ներակայումս «Երեխայի իրավունքների մասին» և «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքներն ամբողջությամբ վերանայվել են և արդեն նոր նախագծերը դրվել են հանրային քննարկման:

Այնուհետև խորհրդի անդամ Արայիկ Հայրապետյանը ներկայացրեց, որ հաշվի առնելով նաև նախորդ նիստի ընթացքում ներկայացված մտահոգությունները, ինչպես նաև մասնավոր զրույցների ընթացքում լրագրողների կողմից բարձրացված հարցերը, վերոնշյալ Նախագծերում երեխաների իրավունքների պաշտպանության վերաբերյալ հստակ կարգավորումներ են տրվել, միաժամանակ շեշտադրումը դրել են խոցելի խմբերի և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների վրա: Հաշվի է առնվել նաև այն հանգամանքը, որպեսզի երեխաների մոտ հոգեբանական ճնշվածություն չառաջանա, հեռուստահաղորդումների ընթացքում երեխայի անձնական տվյալները չեն հրապարակվելու: Մյուս կողմից առկա է «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքը, որտեղ սահմանված են այն երաշխիքներն ու իրավական գործիքները, որոնք պաշտպանում են լրագրողների իրավունքները, ինչպես նաև իրավական շահերը: Եվ այս առումով պետք է տրվեն շատ նուրբ իրավական կարգավորումներ, որպեսզի չխաթարվի լրագրողի օրինական գործունեությունը և միաժամանակ պաշտպանվի երեխայի իրավունքներն ու օրինական շահերը:

Նախագծերում կատարված փոփոխություններին ծանոթանալու և պարբերաբար կատարված թարմացումներին հետևելու հետ կապված հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ս.Զաքարյանը նշեց, որ Նախագիծը տեղադրված է իրավական ակտերի նախագծերի հրապարակման www.e-draft.am միասնական կայքում:

Նախագծի հետ կապված խորհրդի անդամներ Գ. Գրիգորյանցի, Ա. Մուրադյանի, Տ. Պետրոսյանի, Մ. Անտոնյանի և Ա. Քոչարյանի կողմից առաջարկվեց նշված կանոնակարգին

կցել նաև վերջինիս կիրառման մեթոդական ուղեցույց, որտեղ հստակ կնկարագրվի ողջ ընթացակարգը: Ընդ որում նրանք նշեցին, որ իրենց կազմակերպություններում կան նման ուղեցույցներ և կանոնակարգեր, որոնք կարող են տրամադրել նախարարությանը:
Խորհուրդը նախարարի առաջարկությամբ հավանություն տվեց արված առաջարկությանը, քանի որ, ինչպես նշեց նախարարը այս դեպքում փաստաթուղթը ավելի կամբողջականանա և կլինի միասնական բոլոր կազմակերպությունների համար:

Ամփոփելով հարցի քննարկումը, Նախարարի առաջարկով խորհուրդը որոշեց, որ մեկշաբաթյա ժամկետում խորհրդի անդամների կողմից «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկվող հարցի հետ առնչվող մասի, ինչպես նաև կանոնակարգի ներկայացված նախագծի վերաբերյալ առաջարկություններն ու դիտողությունները գրավոր կներկայացվեն նախարարության աշխատակազմի քարտուղարություն:

Որոշվեց նաև, որ նույն ժամկետում խորհրդի անդամները նախարարություն կներկայացնեն նաև կազմակերպություններ այցելելու կանոնակարգի հետ կապված իրենց ունեցած մեթոդական ուղեցույցներն ու այլ փաստաթղթերը:

Հարցի քննարկման ավարտին նախարարը նշեց, որ առաջարկությունների առկայության պարագայում այն դարձնելու են առանձին քննարկման թեմա, ներկայացված կանոնակարգը լրամշակվելու է, կրկին ուղարկվելու է խորհրդի անդամներին՝ կարծիքի, որից հետո արդեն կայացնելու են վերջնական որոշում:

3. Մանկատան շրջանավարտներին բնակարանների տրամադրման վերաբերյալ ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագծի ներկայացում և քննարկում

(Սոցիալական աջակցության վարչության պետ Ա.Մինասյան)

Նախարարության աշխատակազմի սոցիալական աջակցության վարչության պետ Ա.Մինասյանը ներկայացնելով 3-րդ հարցը, նշեց՝ որ 2003 թվականի հուլիսի 23-ի թիվ 983-Ն որոշմամբ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին հատկացված բնակարանները նվիրաբերելու նպատակով կազմվել է ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին որպես սոցիալական բնակարանային ֆոնդ հատկացված բնակելի տարածքները (բնակարանները) նվիրաբերելու մասին» որոշման նախագիծ, որով առաջարկվում է որպես սոցիալական բնակարանային ֆոնդ ձեռք բերված բնակարաններն անհատույց օգտագործման պայմանագրի հիման վրա նվիրաբերել մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին:

Բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված անձանց «ԱԾԽՄ երեխաներին սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ սոցիալական բնակարաններ տրամադրելու նպատակով կատարվել են որոշակի աշխատանքներ և 2003 թվականից սկսված 166 շահառուների հատկացվել են սոցիալական բնակարաններ, որոնց հետ կնքվել են գույքի անհատույց

օգտագործման պայմանագրեր 10 տարի ժամկետով և այդ գործընթացը շարունակվել է մինչև 2012 թվականը:

Այնուհետև 2010 թվականի արձանագրային որոշմամբ, բացի ԱԾԽՄ երեխաներից, բնակելի տարածություն ստանալու համար հերթագրվելու իրավունք տրվել է նաև այլ սոցիալական խմբերի: ՀՀ կառավարության 2013 թվականի օգոստոսի 1-ի թիվ 894-Ն որոշմամբ հստակեցվել է բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված անձանց ցանկը:

2012 թվականի որպես սոցիալական բնակարանային ֆոնդ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն է հատկացվել ՀՀ Շիրակի մարզի, Մարալիկ քաղաքի Շիրազի փողոցի NN 25,26,27,33 և 34 շենքերը, Երևան քաղաքի, Թբիլիսյան խճուղու 3/14 հասցեում գտնվող ուսումնաարտադրական շենքը, Սպիտակ քաղաքի «Վարպետաց» թաղամասում 9 բնակելի տները, որոնց սպասարկման նպատակով 2012 թվականին ստեղծվել է «Հանգրվան» ՊՈԱԿ-ը, որը 2017 թվականի դեկտեմբեր ամսին միավորվեց «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ին:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հուլիսի 23-ի N 983-Ն որոշմամբ տրամադրված 166 բնակարաններում տեղավորված անձինք/ընտանիքները, ՀՀ կառավարության 2015թ. թիվ 1069-Ն որոշմամբ շարունակում են անհատույց օգտագործման իրավունքով բնակվել այդ կացարաններում՝ 10 տարի ժամկետով, եթե ընտրված կազմակերպության կողմից բնակարանների նպատակային օգտագործման վերաբերյալ տրվել է դրական եզրակացություն:

Ընդառաջելով այդ բնակարաններում բնակվող մանկատան նախկին շրջանավարտների բազմաթիվ դիմումներով ներկայացված խնդրանքին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ պայմանագրի կնքման պահին գործող ՀՀ օրենսդրությամբ հնարավոր էր նաև այդ բնակարանների մասնավորեցումը, ՀՀ մարզերում և Երևան քաղաքում ստեղծվեցին միջգերատեսչական աշխատանքային խմբեր՝ կազմված մարզպետարանի աշխատակազմի, սոցիալական աջակցության տարածքային մարմնի, տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակազմի, ՀՀ ոստիկանության ԱՎՎ և համայնքային ոստիկանության ներկայացուցիչներից՝ ուսումնասիրելու տվյալ բնակարանում բնակվելու և պայմանագրային պարատավորությունները պատշաճ կատարելու հանգամանքն՝ եզրակացություն ներկայացնելու նպատակով:

ՀՀ մարզերից և Երևանի քաղաքապետարանից արդեն իսկ ստացվել են 166 բնակարաններում բնակվելու վերաբերյալ եզրակացությունները, որոնցից շուրջ 46 անձի (ընտանիքի) վերաբերյալ տրվել է բացասական եզրակացություններ: Աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են և որոշման վերջնական տարբերակը առաջիկայում դրվելու է շրջանառության մեջ:

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետության 2003-2007 թվականների պետական բյուջեների «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագրերի շրջանակներում բնակարանների կահավորման նպատակով գնված և դեռևս չբաշխված ութ անվանում գույքին (14.114.700.0 ՀՀ դրամ արժողությամբ), Ա. Մինասյանը նշեց, որ որպես բնաիրային օգնություն

այն հատկացնելու են Հայաստանի Հանրապետության Տավուշի և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզերի սահմանամերձ բնակավայրերի սոցիալապես անապահով ընտանիքներին՝ «սոցիալական դեպքի» վարման շրջանակներում:

Նախարարը հավանություն տալով ներկայացված առաջարկություններին, միաժամանակ հանձնարարեց, որպես նշված գույքի օգտագործման ուղղություն, որոշման նախագծում ներառել նաև երեխաների շուրջօրյա հաստատությունների վերակազմակերպման արդյունքում կենսաբանական ընտանիք վերադարձած երեխաների ընտանիքներին այդ գույքից տրամադրման հնարավորությունը:
Հանձնարարվեց նաև արագացնել ներկայացված որոշման նախագծի լրամշակման և ՀՀ կառավարություն ներկայացման աշխատանքները:

4.1.«Պետական աջակցություն մանկատան շրջանավարտներին» ծրագրի արդյունքների ամփոփ տվյալների ներկայացում

(Խորհրդի անդամ Ա.Մնացականյան)

Խորհրդի անդամ Աննա Մնացականյանը ներկայացնելով «Պետական աջակցություն մանկատան շրջանավարտներին» ծրագրի արդյունքների ու ամփոփ տվյալների վերաբերյալ վերլուծությունը՝ նշեց, որ այն իրականացվել է «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի» կազմած հարցաթերթի միջոցով, իսկ մուտքագրումն ու որակական վերլուծությունը կատարվել է «Ակունք» ԷՍՀԿ ՀԿ-ի աշխատանքային խմբի կողմից: Նա համառոտ տեղեկատվություն ներկայացրեց վերոնշյալ ծրագրի շրջանակներում մանկատների և այնտեղ խնամվող երեխաների, ինչպես նաև ձեռք բերված բնակարանների թվաքանակի և նրանց բախշվածության, բնակության վայրում հաշվառված անդամների, վերջիններիս բնակարանների կոմունալ պայմանների, սանիտարահիգիենիկ վիճակի, կահավորվածության, ընտանիքին տրամադրվող սոցիալական ծառայությունների, միջին ամսեկան եկամտի, ընտանեկան կարգավիճակի և կրթության վերաբերյալ:

Հարցի քննարկումն ավարտելուց հետո Նախագահի առաջարկով Խորհուրդը որոշեց ի գիտություն ընդունել խորհրդի անդամ Ա. Մնացականյանի կողմից ներկայացված տեղեկատվությունը:

4.2. «Սոցիալական աշխատանքի պրակտիկայի զարգացում Արմավիրում և Արարատում» ծրագրի ներկայացում

(«Արմավիրի զարգացման կենտրոն» ԲՀԿ-ի նախագահ Նաիրա Առաքելյան)

«Արմավիրի զարգացման կենտրոն» ԲՀԿ-ի նախագահ Նաիրա Առաքելյանը անդրադարձավ «Սոցիալական աշխատանքի պրակտիկայի զարգացում Արմավիրում և Արարատում» ծրագրի իրականացման ընթացքին և ի հայտ եկած խնդիրներին:

Միաժամանակ նշեց, քանի որ վերոնշյալ ծրագիրը դեռևս չի ավարտվել, այն ամբողջությամբ կներկայացվի ավարտից հետո:

Ամփոփելով հարցերի քննարկումը, Նախարարը ևս մեկ անգամ կոչ արեց խորհրդի անդամներին ցուցաբերել ակտիվություն, բարձրաձայնել ոլորտին վերաբերող ցանկացած հարց և խնդիր, քանի որ նախարարությունը շահագրգիռ է, որպեսզի առկա խնդիրներին լուծումներ տրվեն պետություն-հասարակություն ակտիվ համագործակցության արդյունքում:

Նիստի ավարտին որոշում կայացվեց կազմել արձանագրության նախագիծ և Խորհրդի անդամների հետ համաձայնեցնելով այն ներկայացնել ստորագրման:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.ԱՍԱՏՐՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԵՑ՝ Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆԸ